№ 122 Սեպտեմբերի 3 Հաբաթ 1883 Սեպտեմբերի 3 Հաբաթ № 122

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Սղնախից։ Նեղքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ինչով է զանազանվում գիւղատնտեսութիւնը միւս արուեստներից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Օգոստոսի 29-ին

Վաղուց էր, որ Սղնախի հայ հասարակութիւնը զուրկ էր թատերական ներկայացումներից։ Դեռ 1866 թուականից սկսեալ, ամառնային արձակուրդների ժամանակ, երբ որ Սղնախը ուրախանում էր իր մէջ խմբված մատաղահաս ուսանողների ներկայութեամբ, այդ ժամանակից թատրոնը տացաւ հասարակութեան աչքում իր բուն նշանակութիւնը։ Թատրոնը իր երիտասարդ դերասանների շնորհիւ զարթեցրեց հասարակութեանը իր թմրած դրութիւնից։ Սորա սկզբնապատճառը հանդուցեալ Կոնստանտին Տէր-Մատթէոսեանն էր, որ իր մատաղ կեանքը կնքեց Ս. Պետերբուրգում, դեռ իր ուսումը չաւարտած։ Նրա վաղահաս մահվանից վերջացաւ այստեղ և թատերական գործը։

Ահա այսպէս անցան շատ տարիներ և մեր Սղնախի հայ հասարակութիւնը այլ ևս չարժանացաւ տեսնել թատերական բեմը։ Այս երեք տարի է, որ տեղացի երիտասարդներ՝ Դաւիթ Տէր-Ստեփանեանը և Վարդան Ենիկոլոպեանը նորից զարթեցրին մեր հասարակութեան մէջ ճաշակ դէպի թատրոնը, բայց ափսոս, որ այս ամառը, չատերը ունենալով այս բարեմիտ երիտասարդների հետ անձնական հաշիւներ, արգելում էին այս գործը, վատաբանելով ժողովրդի առաջ պարոնների նպատակը և մինչև անգամ վայր ձգելով նոցա պատիւը։ Շատերը դեռ չը գուրս եկած իրանց նահապետական ազիտութիւնից, հաւատում էին և այսպիսով չարամիտները մասամբ հասան իրանց նպատակին։ Սղնախում դեռ երբէք օրինակ չէ եղած տեսնել թատերական բեմի վրա տեղացի հայ օրիորդին, բայց այս ամառը «Շուշանիկ» ողբերգութեան ներկայացումը շատ օրինակելի կերպով կատարվեցաւ, օրիորդ Եւա Տէր-Ստեփանեանի աջակցութեամբ, որը, թէև առաջին անգամ, բայց բաւական յաջողութեամբ ներկայացրեց Շուշանիկի դերը։ Շատ լաւ կատարեցին իրանց դերերը և երիտասարդներն էլ։

Պարոններին պատիւ է բերում, որ նրանք յանձն են առել այս գործը, և կարողացան դիմադրել այսքան դժուարութեանց, պատիւ է բերում մանաւանդ յիշեալ օրիորդին, որ դէմ կենալով այսքան նախապաշարմունքներին, յաղթեց ամենայն դժուարութիւնները և մեր ուրիշ օրիորդներին բարի օրինակ տուեց իր բնմ դուրս գալով։

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպել հետևեալը։ «Մի ուսուցիչ, որ աւարտել է իր ուսման ընթացքը Գերմանիայում և ծանօթ է խում ու մունջերի (լալիկների) դաստուրեան ձևին, հասնելով այս օրերս Թիֆլիս քաղաքը, կամենում է պարապել լալիկների հետ իրանց ծնողների տներում, այսինքն սովորեցնել նրանց հայերէն, ռուսերէն և գերմաներէն լեզուով գրել, լսել ձայնով կարդալ, փոքր առ փոքր խօսել, նոյնպէս թուաբանութիւն, աշխարհագրութիւն և այլն։ Ցիշեալ ուսուցչի բնակութիւնը կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատան մէջ։»

—

Սեպտեմբերի 10-ին Արծրունու թատրոնում լինելու է մի ֆրանսիական ներկայացումն։ Ներկայացնողները, որքան լսեցինք, յայտնի դերասաններ են, որ խաղացել են Ս. Պետերբուրգի ֆրանսիական թատրոնում։

—

Լսում ենք, որ պ. Կրոօի վէպը արդէն տպագրված է և այս օրերս նրա օրինակները կը ստացվեն Թիֆլիսում և կը վաճառվեն այստեղ։

—

Հետևեալը մեզ ուղարկված է տպագրվելու համար։ «Մենք Սինեաց աշխարհի Բռնակոթ գիւղի հոգաբարձուներս խնդրում ենք ձեզանից տեղատաք հետևեալ խնդրին ձեր լրագրի էջերում։ Մենք 1881 թուին ստացանք Վեհափառից կօնդակ, որով Հայրապետը հաստատեց մեր ուսումնարանի կառուցումն և վաւերացրեց տասն և չորս անձանց ընտրութիւնը ուսումնարանի հոգաբարձուների պաշտօնի վրա։ Այն օրից ամենայն հոգով և սրտով աշխատեցանք գլուխ հանել դպրոցի գործը և մի տարում կարողացանք մեր նպատակին հասնել։ Մեր ժողովրդից հաւաքածը ուսումնարանի ունեցածի հետ միասին բաւականութիւն տուեց ուսումնարանի կառուցմանը։ Բայց մենք անկարող ենք հայոց լրագիրներ ստանալ։ Ուստի խնդարհաբար խնդրում ենք, որ կամ իրանք խմբագիրները մեր լրագիրների և ամսագիրների, կամ բարերար անձինք իրանց հաշուով ուղարկեն մեր դպրոցի անունով հայոց պարբերական հրատարակութիւններից գոնէ մի քանիսներ»։

—

Զանգեզուրի գաւառից մեզ գրում են, որ այդտեղ կենդանիների ցաւը (տաւարի ազար) մեծ կատաստրոֆներ է անում։ Երկրագործ դասակարդը կատարելապէս յուսահատ դրութեան մէջ է գտնվում։ Ահա ինչ է գրում թղթակիցը։ «Բաւական չէ, որ ժողովուրդը մեծ վնաս է կրում, զրկվելով իր դաշտերը հերկող անասուններից, այլ նրա հետ և ամբողջ Կովկաս երկրին էլ կարող է ասելի մեծ վտանգ սպառնալ, այն է կարող է խօլերա, կամ մի որ և է այլ տարափոխիկ հիւանդութիւն տարածվել երկրի մէջ։ Սատկած կենդանիների լեշերով լցված են այս կողմի գիւղերի փողոցները, գիւղերի շրջակաները և գետերն ու առուակները, որտեղից չատերը ջուր են վերցնում խմելու համար և ուր խմացնում են կենդանի մնացած միւս անասուններին։ Այս գաւառի գիւղերը պատած են այժմ դարշահոտութեան մթնոլորդով, այնպէս որ ժողովուրդը կատարեալ թոյն է ներշնչում օդի հետ միասին։ Եւ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում այդ կորստաբեր երևոյթների վրա, ամենքը միանգամայն անտարբեր աչքով են նայում այդ անմխիթար եղելութեան վրա»։

—

ԴՈՒՇԷԹԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Դուշէթի վրայ եկեղեցու շինութեան ժամանակ մի հոդի բանուորներից այս օրերս վերևից վայր ընկաւ և այժմ մերձ ի մահ հիւանդ պառկած է։ Այս տարի ցորենի, խաղողի պտուղների և այլ բերքերի շատ մեծ առատութիւն է մեր կողմերում։ Լսում ենք, որ Դուշէթից ոչ հեռու գտնված Աբանիս գիւղի մօտ, անտառի մէջ, գտել են աղի հանք։»

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յայտնում է հետևեալ տակտ առաջին հարկաւորութեան մթերքների վրա, սեպտեմբերի 1-ից մինչև 1 հոկտեմբերի։ Կրուպչատկա ալիւրից թխած հացի ֆունտը արժէ 5 կոպէկ, ցորենի ալիւրից թխած հացի ֆունտը առաջին տեսակի արժէ $2^1/_2$ կոպ., երկրորդ 2 կոպէկ։ Նոյն ալիւրից տեղական թօնրի մէջ թխած հացը արժէ առաջին տեսակը ֆունտը 5 կոպ., երկրորդ 3 կոպ., երրորդը $2^1/_2$ կոպէկ։ Կրուպչատկայից խառն ցորենի ալիւրի հետ թխած լաւաշներ արժեն առաջին տեսակի ֆունտը 5 կոպ., երկրորդ 3 կոպ., երրորդ $2^1/_2$ կոպէկ։ Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի արժէ 8 կոպ., երկրորդ 7 կոպ., սուկի 15 կոպ., ոչխարի մսի ֆունտը 8 կոպէկ։

—

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը, ինչպէս երևում է մատղութիւն ունի անցեալ տարվայ դրութեանը հասցնել դպրանոցի եօթերորդ դասատան աշակերտներին։ Ուսումնական տարին սկսվեց, բայց տակաւին որոշված չէ եօթերորդ դասատան դասընթացքը։ Աշակերտների մեծամասնութիւնը տարօրինակ լուրեր լսելով իրանց դասատան դասընթացքի մասին, չեն ժողովվում, իսկ եկածները կրկին ցրվում են, չը կամենալով անորոշ դրութեան մէջ լինել։ Մասնագիտական կը լինի, թէ լրացուցիչ դասատան նշանակութիւն կը տանայ եօթերորդ դասատունը, ինչ և իցէ աշակերտները այդ պիտի իմանային, ուսումնական տարին դեռ չը սկսած, որպէս զի իրանց անելիքն անէին։

—

Զարմանալի ձև ունի Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քաղաքի փողոցները սրբելու։ Մեզանում թողը սրբում են ոչ թէ վաղ առաւօտ, երբ քաղաքի բնակիչները դեռ ևս քնից վեր կացած չեն, այլ կէսօրին, երբ փողոցները լի են երթևեկներով։ Եւ ուղիղ այդ ժամանակ քաղաքային վարչութեան մշակները գարշահոտ և ապականիչ թող են բարձրացնում փողոցներում, ահագին խմբերով ասելով ամենաբազմամարդ փողոցները։

—

Թիֆլիսի քաղաքային թատրոնում սկսվել են արդէն ռուսաց օպերայի ներկայացումները։ Բայց թատրոնը մեծ մասամբ դարդակ է լինում։

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉՈՎ Է ԶԱՆԱԶԱՆՎՈՒՄ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄԻՒՍ ԱՐՈՒԵՍՏՆԵՐԻՑ

Գիւղատնտեսութիւնը մեծ տարբերութիւն ունի պարապմանց միւս ճիւղերից. առաջին, այն պահանջների յատկութիւնների վերաբերութեամբ, որ նա լրացնում է, երկրորդ, նորա արտադրած բերքերի յատկութիւնների նկատմամբ և երրորդ, այն առանձին պայմաններով, որոնց մէջ գտնվում է այստեղ կապիտալի և աշխատանքի գործածութիւնը։

I. Գիւղատնտեսութիւնը պէտք է մատակարարէ հասարակութեան այնպիսի մթերքներ, որոնք լրացնում են մարդուս կենսական պահանջները և կազմում են նորա կեանքի ամենագլխաւոր պայմանը. կայ երկրագործական բերքերի մի այնպիսի minimum, առանց որի անհնարին է երկրի գոյութիւնը և որը անպատճառ պէտք է հայթայթած, եթէ մարդիկ չեն կամենում սովամահ դառնալ։ Որքան էլ դժուար լինեն հողային արտադրութեանց այդ փոքրագոյն քանակութիւնը ստանալու պայմանները, որքան էլ նա զրկէ մարդկանց նոցա ուրիշ կարիքները լրացնելու կարողութիւնից, այնու ամենայնիւ երկիրը պէտք է ամեն ճիգ թափէ այդ մթերքի պահանջը ունի մէկ չափ, մէկ սահման, որից նա դուրս գալ անկարող է։ Մինչդեռ զգեստի, բնակարանի և ուրիշ երկրորդական պահանջների վերաբերութեամբ մարդս չունի մի որոշ սահման, այսինքն կարող է ըստ իր կամքին աւելացնել կամ պակասեցնել այդ պահանջները, ուտելիքի կողմից նա փակված է նեղ սահմանների մէջ, որոնք պայմանաւորվում են նորա մարմնի բնական յատկութիւններով։ Նա չէ կարող, օրինակ, ուտել հաց կամ միս աւել, քան որչափ կարող է ընդունել նորա օրգանիզմը։ Այդ է պատճառը, որ երբ գիւղատնտեսական բերքերի առաջարկութիւնը աւելանում է, իսկոյն նկատվում է նոցա գների արտաքոյ կարգի անկումն, որովհետև, ինչպէս վերևում յիշեցինք, նորա պահանջը սահմանափակված է մարդուս մարմնի բնական յատկութիւններով։

II. Ինչ կը վերաբերի գիւղատնտեսական բերքերի առանձին յատկութիւններին, այդ մասին պէտք է նկատել, որ վերջինները չատ նշանաւոր են և կայանում են հետևեալում. 1) առաջին, նոքա անընդունակ են իրանց օգտակարութիւնը երկար պահպանելու. միսը, կաթը, բանջարեղէնը կորցնում են իրանց օգտակարութիւնը մէկ, երկու կամ չատ երեք օրվայ մէջ։ Հացեղէնները, ճշմարիտ է, պահպանվում են ասելի երկար, բայց համեմատաբար ուրիշ արուեստների արտադրութիւնների հետ, նոցա կեանքը ևս երկար չէ։ Եթէ նոցա մէջ գտնվում են այնպիսիք, որոնք ասելի երկար են պահպանում իրանց օգտակարութիւնը, դորա պատճառը պէտք է վերադրած գիւղատնտեսական տեխնիկայի նորութեան և կատարելագործութեան։ Ռուսաստանի հայկղէնների մեծ մասը փոխադրութեան անդամ չէ դիմանում ամառ ժամանակ, որովհետև կասկածց յեռոյ նա, ըստ մեծ մասին, չէ չորացնվում ինչպէս հարկաւոր է. այդ է պատճառը, որ Ռուսաստանի մէջ, զանազան վաճառականական կենտրոններում անհրաժեշտ են համարում շինել թանգագին չտեմարաններ, որտեղ հացեղէնները կրկին անգամ ենթարկվում են կորզելուն և այդպիսով դարձնվում են փոխադրվելու ասելի ընդունակ։ Այդ է նաև պատճառը, որ թացակորզ հացեղէնը, որպէս զի չը ոչնչանայ, տեղափոխվում է միշտ քսակներում, և ոչ թէ վագոնների կամ ուրիշ մեծ արկղների մէջ թափած։

2) Գիւղատնտեսական բերքերի երկրորդ յատկութիւնը կայանում է նոցա մեծադիր (громоздкій) լինելուն մէջ. համեմատաբար իրանց փոքր արժողութեան հետ նոքա ունեն ասելի մեծ տարածութիւն և ծանրութիւն։ Այս խնդրի վերաբերութեամբ յայտնի գերմանացի տնտեսագէտ Բօշերը տալիս է մեզ հետևեալ ուշադրութեան արժանի տեղեկութիւնները. նորա հաշուով.

Մէկ ցէնտներ (մօտ 3 պուդ) ոսկու գինը =	47,500 տալէրի
» » երկաթի գինը =	2,5 տալէրի.
» » հաճարի գինը =	2 տալէրի.

«Երևանի Ցայտարարութիւններ» թերթը հաղորդում է որ յայտնի աւազակապետ Բլբուլը, որ վաղուցվանից բռնված էր տեղիս բանտում, բայց մի քանի շաբաթ առաջ, ինչպէս յայտնեց յիշեալ լրագիրը, փախել էր և թափառելով Երևանի կողմերում մեծ վնասներ էր հասուցանում ճանապարհորդներին,—վերջապէս մի երկու օր առաջ սպանվեցաւ: Այդ բանը աջողվեց պ. Բալաբէկ Ղափլանեանցին, որին յանձնված էր նահանգապետից կալանաւորելու յիշեալ աւազակապետին:

—

Նոյն թերթի մէջ կարդում ենք հետևեալը: «Ցեղումս լուր է տարածված, որ առաջիկայ ամսի սկզբներին Նորին պայծառափայլութիւն Կովկասեան կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակով մտադիր է այցելել Երևան, ուր մնալով մի ամբողջ օրուդիշեր, գնալու է Իգդիրի կողմերը»:

—

Բերլինի «Börsen-Courier» լրագիրը Ի. Ս. Տուրգենևի մահուան առիթով ասում է հետևեալը: «Ամենամեծ գործողներից մէկը, բարձրագոյն առաջնորդը հոգևոր շրջաններում, իշխանը բանաստեղծութեան անսահման աշխարհում, վախճանվեցաւ: Փակվեցան այն աչքերը, որոնք հաղուագիւտ նրբամտութեամբ գիտէին նայել առարկաների և մարդկանց վրա, այլ ևս չէ զարկում այն սիրտը, որը այնպէս անկեղծօրէն համակրում էր մարդկային ցավին, որը այնպէս լաւ գիտէր հասկանալ մերձաւորի բուռն ձգտումները և ապրել նրա ներքին կեանքով: Սառեց այն ձեռքը, որը ողևորում էր գրիչը այդպիսի կեանքով: Ո՞րպիսի պարզութեամբ նկարում էր նա ամենանկարչական, ամենասրտաշարժ պատկերներ: Հանգուցեալի մէջ հանդան միաժամանակ՝ բէալական չկօլայի դիտող մատենագիր և բանաստեղծ սաստիկ սիրող սրտով: Նա անմիջական ներշնչման դանձարանից քաղում էր այն, ինչ որ ուրիշները ձեռք էին բերում միայն տոկուն աշխատանքի ճանապարհով: Նրան, որպէս ճշմարիտ բանաստեղծին, յատուկ էր մարգարէական նախատեսութեան ձիրքը: Այն ժամանակից որ մեռաւ Զարլզ Դիկկէնս, աշխարհը դեռ ևս չէ զգացել այդպիսի կորուստ, որպիսին է Իվան Սերգէեվիչ Տուրգենևի մահը: Ամբողջ կրթված աշխարհը տրտմութեամբ կանգնած է մի այնպիսի մատենագրի դագաղի մօտ, որին այժմ փոխարինող չը կայ:

—

Ամբողջ Վարշավայի մամուլը միաձայն համակրութեամբ խօսում է Ի. Ս. Տուրգենևի տխրալի մահուան մասին: Օրինակ, «Viek» լրագիրը ասում է հետևեալը: «Հանգուցեալի տաղանդը նրման էր մաքուր ջրին, իսկ նրա հայացքները այնպէս լայն էին, որ ընդգրկում էին հանրամարդկային հորիզոնը: Նա ցեղական նախապաշարմունքներ չունէր. այդ պատճառով նրա կորուստը զգալի է ոչ միայն ռուս հասարակութեան համար, այլ ամենքի համար: Տեղ տալով այդ մի քանի տողերին, մենք կատարեցինք մեր ժամանակագրական պարտքը: Դրանից անկախ, մենք կառաջարկենք ընթերցողներին այդ տղամարդու գործունէութեան ընդարձակ նկարագրութիւնը, որը անմահացրեց իր անունը ոչ միայն ռուսաց, այլ և հանրամարդկային գրականութեան մէջ: «Gazetta Warzawska» լրագիրը ասում է. «Այդ կորուստը շատ ծանր է եւրոպական ամբողջ գրականութեան համար, որի մէջ հանգուցեալը փայլում էր, որպէս ամենամեծ աստղներից մէկը, բայց մանաւանդ այդ կորուստը ծանր է ռուսաց գրականութեան համար, որի մէջ Տուրգենևին հաւասար գրող չը կար: «Echo» լրագիրը նուիրում է հանգուցեալին մի քանի խօսքեր, բայց այդ մի քանի խօսքերը լրագրական շատ սիւներին արժեն, ասում է մի ռուս լրագիր: Ահա այդ խօսքերը. «Հռչակաւոր ռուս բոմանիստ Իվան Տուրգենեվ վախճանվեցաւ օգոստոսի 22-ին Բուժիվալում, Փարիզի մօտ: Հանդիստ մեր բարի բարեկամի նշխարին:»

—

Ֆինլանդական լրագիրները տպեցին ներկայ տարվայ օգոստոսի 11-ից յայտնված Բարձրագոյն հրամանը ռուսաց լեզուի դասաւանութեան մտցնելու վերաբերութեամբ Ֆինլանդիայի բէալական լիցէների (գիմնազիաների) և տարրական ուսումնարանների փոքր դասատներում: Այդ հրամանի համաձայն, ռուսաց լեզուի դասաւանութիւնը պէտք է սկսվի երկրորդ դասատնից այն տեղերում, ուր այդ նպատակի համար կարող են գտնվել յարմարաւոր դասատուներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, 16/28 օգոստոս 1883

Թէև նախորդ նամակներով յայտնած եմ թէ թիւրք կառավարութիւնը ոչոքին չը ձերբակալեց յունիս 24-ի յեղափոխութեան համար, բայց այժմ սկսած է անուղղակի կերպով աշխատիլ որ ժողովրդի դործիչներին բանտարկէ և կաշկանդէ: Եթէ ուղղակի յունիս 24-ի յեղափոխութեան պատճառով բանտարկէր, աւելի մեծ արձագանք պիտի ունենար այդ յեղափոխութիւն որ քաղաքական հանդամանք ունէր և մի բուռն բողոք էր տեղական հարստահարութիւններին և թիւրք կառավարութեան անարդար ընթացքին դէմ: Մեր նահանգապետ փաշան որ բաւական խորամանկ է, այդպէս չանէր: Ժողովուրդը մի մասնաժողով ընտրած էր որ իւր բողոքներ ներկայացունէ հարկ եղած տեղերն և գործադրէ հարկ տեսած միջոցներն: Կառավարութիւնը կը դրդէ հայ աղաներէ մէկին որ յունիս 24-ին ծեծուած էր ժողովրդէն, որպէս զի կառավարութեան դիմէ բողոքելով թէ այսչափ հարիւր ոսկի պահանջ ունի պ. Զիթջիփանոյեանէն: Այս երիտասարդ ժողովրդէն ընտրած մասնաժողովի ամենէն գործօն և ամենէն խելահաս անդամներէն մին է: Երբ պ. Զիթջիփանոյեան ստիպուի դատարանները երթևեկել իւր դէմ բացուած այս կեղծ դատի պատճառով, ի հարկէ ալ ժամանակ չը գտնէր ժողովրդի դատով ևս զբաղելու և միանդամայն իւր ընտանիք պահելու համար ունեցած սովորական աշխատութիւնը շարունակելու: Կառավարութիւնը որ այս դատի մէջ մատ ունի, դատաստանը երկարաձգելով Զիթջիփանոյեանին բաւական ժամանակ կորցունել տալէ յետոյ, վերջի վերջոյ կը բանտարկէ անշուշտ նորան, յօդուտ հայ աղային վճիռ տալով: Այս տեսակ անհատական զրպարտիչ գանգատներ կը սկսին նաև մասնաժողովի միւս անդամներին դէմ:

Հարստահարութիւնները այժմ առաջինէն աւելի սաստիկ կը շարունակուին: Տուրքի համար սաստիկ կը նեղեն գիւղացի խեղճ և աղքատ ժողովրդին. քրիստոնէական սուրբ կրօնը անլուր կերպով կանպատուի քաղաքիս մէջ անգամ: Երկու շաբաթի չափ յառաջ, Այդեստանի ս. Յակոբ եկեղեցւոյ թաղին մէջ ուր հայ և թիւրք խառն կը բնակին, թիւրքերն գիշերայն կը ծեփեն եկեղեցւոյ դուռը մարդու ապականութիւններով: Թաղական խորհուրդը գործը կը յայտնէ նահանգապետ փաշային որ կարևորութիւն չը տար և կասէ թէ արդոներն գտէք բերէք որ պատժեմ: Թիւրքերը կը կրկնեն այդ սրբապղծութիւն: Քաղաքիս և Այդեստանի 28 քահանայներն հեռագրով կիմացունեն եղելութիւնը Կ. Պոլիս ս. պատրիարքին և Բ. Դրան: Բ. Դուռը դեռ ոչինչ պատիժ կամ կարգադրութիւն չէ տուած այդ սրբապիղծների համար. միայն թէ հեռագրով հարցուցած է մեր նահանգապետ Հասան փաշային թէ քահանայների անունները որ ստորագրուած են յիշեալ հեռագրի տակ, կեղծ են թէ արդարև այդ անուններով քահանայներ կան Վանի մէջ: Նահանգապետը չէ հերքած հեռագրատունէն Բ. Դուռը հաղորդուած այդ ստորագրութիւնների ճշդութիւնը:

Երկու շաբաթի չափ յառաջ հասաւ այստեղ պ. Այրըս, անգլիական նորընտիր դեր-հիւպատոսը Վանի: Ժողովրդէն ընտրուած մասնաժողովի անդամները գնացին դիմաւորել նմա մէկ աւուր ճանապարհ: Պ. Այրըս Վան մտածին պէս ուղղակի եկաւ հայոց առաջնորդարանը ուր նահանգապետ փաշայի կողմէն մի յատուկ պաշտօնատար եկաւ իր գալուստ շնորհաւորելու: Այնուհետև պ. Այրըս այցելեց նահանգապետ փաշային և Այդեստան եկնելով գնաց Կամսարական ըէկի մօտ և յետոյ հանդիպեցաւ ամերիկացի միսիոնարների տունը: Ժողովրդի պատգամաւորները այնտեղ դարձեալ ներկայանալով իրեն, մի ուղերձ մատուցին որով անգլիական կառավարութեան բարձր ուշադրութիւնը կը խնդրէին մեր հարստահարուած անտանելի դրութեան վրա և կաղաչէին փութացունել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի գործադրութիւնը: Պ. Այրըս մի երիտասարդ անգլիացի է ազնուականի որդի, թիւրքերէն լեզուին լաւ հմուտ, Բնութեան օրէնքներին համեմատ աճում և զարգանում են բոյսը և կենդանին, մարդս միայն ղեկավարում է բնութեան այժերը, տալիս է նրանց այս կամ այն ուղղութիւնը: Մարդուս աշխատանքի նպատակն է այս ասպարիզում, մէկ կողմից, աւելացնել երկրի բնական արդիւնաբերութիւնը, միւս կողմից, այնպիսի ուղղութիւն տալ նրան, որ կարողանայ արտադրել միայն հարկաւոր բերքերը: Երկրագործութեան ասպարիզում մարդուս աշխատանքը սահմանափակված է նեղ շրջանի մէջ, այն է, երկիրը պատրաստել, սերմանել և հնձել սերմանածը: Գիւղատնտեսութեան մէջ աշխատանքի այդպիսի ստորադրեալ դեր խաղալուց առաջ են գալիս նորա հետևեալ առանձնայատկութիւնները.

1) Գիւղատնտեսական աշխատանքը, նորա ուղղութեան և բաժանման վերաբերութեամբ, մեծ կախում ունի բատաքին բնական պայմաններից՝ կլիմայից, եղանակից, երկրի առանձին յատկութիւններից և այլն: Ամեն մէկ տեղ, ամեն մէկ երկիր, համեմատ իր բնական պայմաններին, կարող է արտադրել բոյսերի կամ կենդանիների միայն յայտնի տեսակները: Թէ գիւղատնտեսական գործողութեանց հետևողութիւնը և թէ նոցա տեսակը ճշդիւ որոշած է բնութիւնից. կապիտալի և աշխատանքի գործածութիւնը սաստկացնելով չէ կարելի չտապեցնել բոյսերի կամ կենդանիների հասունանալը: Ցանելու և հնձելու ժամանակները բաժանված են միմեանցից մի քանի ամիսներով, որոնց չէ կարող պակասեցնել ոչ մի աշխատանք կամ կապիտալ, ոչ մի գիւղատնտեսական հմտութիւն: Այդ գործողութեանց ամեն մէկը սկսվելով մի որոշ ժամանակ, անպատճառ պէտք է վերջանայ նոյնպէս մի յայտնի ժամանակամիջոցում, որը չէ կարելի երկարել առանց վատ և անվարձատրելի հետևանքների: Այդ է պատճառը, որ գիւղացու աշխատանքը անհաւասար կերպով է բաժանված տարվայ եղանակների մէջ. մինչդեռ ամառը, դաշտային պարապմանց ամենաջերմ ժամանակը, գիւղացին, ցվերջին աստիճան լարելով իր այժերը, աշխատում է ցուլի պէս, ձմեռ ժամանակ, որը անհրաժեշտ կերպով փոխանակում է ամառը, նա համարեա չունի ոչ մի գործ: Մի և նոյնը պէտք է ասած երկրագործութեան մէջ գործ դնվող կապիտալի մասին, որը գլխաւորապէս կայանում է գիւղատնտեսական գործիքների մէջ. այդ վերջինները տարվայ մեծ մասը մնում են առանց գործածութեան, մինչդեռ պարապմանց ուրիշ ճիւղերի մէջ կապիտալը գործ է ածվում անդադար ամբողջ տարվայ ընթացքում: Երևելի գործարանական մեքենաները կարող են բանել ամբողջ տարին շարունակ, մինչև անգամ գիշերները, միայն թէ պակասութիւն չը լինի նրանց ֆաբրիկատների պահանջի մէջ:

2) Աշխատանքի բաժանման պրինցիպը դժուար է յարմարեցնել հողագործութեանը այնչափ, որչափ ձեռակերտողարուեստներին (обработывающая промышленность): Մինչդեռ այդ վերջինների վերաբերութեամբ բոլոր գործողութիւնները, մի որ և է առարկայ չինելու համար, կատարվում են մի և նոյն ժամանակ, այնպէս որ մարդս կարող է անընդհատապէս կատարել բոլոր աշխատանքի միայն մէկ մասը,—երկրագործութեան մէջ տնտեսական օպերացիաները, անպայման կախում ունենալով տարվայ եղանակներից, կատարվում են հետևաբար, մէկը միւսի ետևից. այստեղ մարդս չէ կարող կատարել մի և նոյն գործը ամբողջ տարվայ ընթացքում:

3) Երկրագործական աշխատանքը և կապիտալը սերտ կապով են կապված հողի հետ: Վերջինը միանդամայն և ընդ միշտ մի որոշ քանակութեամբ տուած է բնութիւնից: Երկիրը պարարտացնելը կամ բարւոքելը, նորա վրա կառուցած շինութիւնները, միով բանիւ, այն ամենը, ինչ որ անուանվում է երկրագործական աշխատանք և կապիտալ, այնպիսի ծախքեր են, որոնց անկարելի է հանել հողից կամ տեղափոխել:

4) Հողագործի աշխատանքը և կապիտալը շատ փոքր մասերով են ցրված հողի մեծ տարածութեան վրա: Գործարանական արուեստը հողի մի և նոյն տարածութեան վրա կարող է զարգանալ և զօրեղանալ այնքան, որքան կը կամենայ գործարանատէրը: Այդպէս չէ հողագործութեան մէջ. այստեղ ինչքան էլ կամենայ երկրագործը ստանալ հողից մեծ արդիւնք, այնու ամենայնիւ նա չէ կարող գործ դնել, օրինակ, մէկ դեսիատին հողի վրա աւելի

› › գետնախնձորի գինը=0,6 տ.

Եթէ վերցնենք ապրանքներ փոխադրելու սովորական տարիքը Պրուսիայում, կիմանանք որ ամեն մէկ 7 վերստ փոխադրելու վճարը կլանում է իր մէջ.

ոսկու 0,000007% պրօցէնտը.
երկաթի 1,5%
հաճարի 1,6% ›
գետնախնձորի 5,5% ›

Այս տեղեկութիւններից ինքն ըստ ինքեան հետևում է, որ գիւղատնտեսական արտադրութեանց մէկ տեղից միւս տեղը փոխադրելը արժան չէ նստում. օրինակ, գետնախնձորի ճանապարհածախսը բոլորովին կլանում է իր մէջ նորա արժէքը, եթէ նրա ծննդատեղին ընդամենը 18 մղոն հեռաւորութիւն ունի շուկայից, մինչդեռ ոսկին կարող է մի քանի անգամ պտտել երկրագնդի շուրջը, կորցնելով միայն իր արժողութեան մի աննշան մասը: Մի և նոյն վիճակին (ինչպէս գետնախնձորը) ենթարկված են ուրիշ շատ գիւղատնտեսական բերքեր:

III. Այժմ դառնանք այն հարցին, թէ որքան աշխատանք և կապիտալ են պահանջվում գիւղատնտեսական արհեստի մէջ: Պէտք է նկատել, առհասարակ, որ ոչ մի արհեստ չէ վայելում բնութեան այժերի օգնութիւնը այնչափ, որչափ գիւղատնտեսութիւնը: Այդ ասպարիզում մարդս գործ ունի այնպիսի առարկաների հետ, որոնք ապրում են իրանց սեփական կեանքով:

Փոքր Ասիայի մէջ հիւպատոսական պաշտօն վարելու համար մասնաւորապէս պատրաստուած Կ. Պոլսի Օրթագիւղի վարժարանին մէջ, զոր յատկապէս այդ նպատակով բացած է անգլիական դեսպանատունը: Դեռ չէ կարող հայերէն խօսել, բայց փոքր ի շատէ կը հասկանայ: Այժմ կաշխատի հայերէն լեզուն ուսնել այստեղ: Ինք հաւատք չունի թէ այս երկիր կը բարեկարգուի թիւրք կառավարութեան ձեռքով. այս ընթացքով նորա կրթանում մօտալուտ կը համարի, իսկ բարեկարգութիւնների գործադրութեան համար անգլիական զօրաւոր պրոտէկտորատի հարկը՝ անհրաժեշտ: Կամսարական ըէկ մի քանի օրէ ի վեր ռուսական հիւպատոսարանի մէջ հիւրընկալված է պ. Այրըսին մինչև որ սորա բնակարանի պատրաստութիւնները լրանան: Պ. Այրըս որ բաւական ժամանակ մնացած է Կ. Պոլիս և Թիւրքիայի այլ կողմերն, մեծ համարումով կը խօսի հայերի ընդունակութիւններին վրայ:

Խրիմեան Հայրիկ դեռ մեկնած չէ Վանէն, թէև ինք մտադիր կերևի մի քանի շաբաթէն յետոյ Մուշի ճանապարհով երթալ Կ. Պոլիս: Կառավարութիւնը կուզէ փակել այժմ Վարագի Վանքի տպարանը զոր երեսուն տարիէն աւելի է որ Հայրիկ բացած է այնտեղ: Կառավարութիւնը կառարկէ թէ այդ տպարան օրինաւոր հրամանագիր չունի, բայց Հայրիկ յայտնեց նահանգապետ փաշային թէ ինք ըստ օրինի իրաւունք ունի տպարանը շարունակելու: Առ այժմ այս խնդիր այսպէս առկախ մնացած է:

Նահանգիս թիւրքաց կրթական ժողովը այցելելով հայոց Կենտրոնական վարժարանին, այնտեղ գործածուած դասագիրքերէն մէկ մէկ օրինակ ստացաւ քննութեան ենթարկելու համար: Դասագիրքերէն մի քանին իբր անվնաս գիրքեր վերադարձուցած են տեսչին. մի քանին ալ Կ. Պոլիս լուսաւորութեան նախարարին յղած են, իբր բարձր ուշադրութիւն հրաւիրելու համար այդ գիրքերի վրայ: Սոցա մէջ կը գտնուին նաև Կոստանեանցի Ծաղկաքաղները որոց մէջ Եղիշէին, Ղազար Փարպեցիին և այլ հին մատենագիրներէ քաղուած հատուածներ կան:

Այստեղ որջացող Դոմինիկեան կրօնաւորների գլխաւորն Մուսուլի կողմերէն եկաւ Վան մի քանի օր յառաջ: Սա տեղական հանդամանքները և հայ ժողովրդի դպրոցական պէտքերը ուսումնասիրելէ յետոյ, պիտի մեկնի Վանէն և Հռոմի հետ բանակցելով, Դոմինիկեան հայրերի տեսչութեան տակ մի դպրոց պիտի բանայ այստեղ, հայ մանուկների միտքն ու սիրտը դիակնացունելով եղուիտութեան զոհեր պատրաստելու համար: Թիւրք կառավարութիւնն ալ նպաստաւոր կերևի սոցա ձեռնարկութիւնների յաջողութեան:

Թիւրքօ-պարսկական սահմանագլուխները դրատելու համար մի մասնաժողով պիտի գայ այստեղ մօտիկ օրեր: Այդ մասնաժողովի մէջ, բացի թիւրք և պարսիկ անդամներէ, կը գտնուին նաև պ. պ. Դէնէթ և Իվերէա, Էրզրումի ռուսական և

անգլիական ընդհանուր հիւպատոսները: Կամսարական բէկ կը սպասէ պ. Դէնէթի այստեղ գալուն որոյ պատճառով յապաղած է ցարդ դէպի Ներ կողմ անելիք ճանապարհորդութիւնը: Հաւանօրէն երկու շաբաթի չափ յետոյ Կամսարական բէկ կը մեկնի Վանէն Ռուսաստան երթալու համար: Արդէն բաւական ժամանակ է որ արձակուրդի (congé) հրաման ստացած է:

Հրանտ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Զայցբուրգի տեսակցութիւնը, նկատում է Morgenpost», կարծես թէ վկայում է, որ կուլիսների ետեւը նշանաւոր անցքեր են պատրաստվում, որոնք այժմ գաղտնի են, բայց շուտով կը յայտնվեն: Ցայտնի է միայն, որ մեծ փոփոխութիւններ են պատրաստվում Եւրոպայի դրութեան համար: Ամեն բանից երևում է, որ Սպանիան կը միանայ Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի դաշնակցութեանը: Բացի այդ Պորտուգալիայի թագաժառանգի, Սերբիայի և Ռումինիայի թագաւորների և չերնոգորիական իշխանի հանապարհորդութիւնները քաղաքական նշանակութիւն ունեն: Այսպէս թէ այնպէս, ամեն մարդ զգում է, որ եւրոպական խաղաղութիւնը կարող է խանգարվել»:

—«Polit. Corresp.» լրագրին օգոստոսի 19-ից գրում են. Ռնգարիայից ստացված տեղեկութիւնների համեմատ անկարգութիւնները հրէաների դեմ բաւական մեծ են եղել: Մօտ կէս գիշերին 400 մարդուց բաղկացած մի խումբ, զինաւորված և քաղաքի դիրքի հետ ծանօթ անձինքներից առաջնորդված, շրջում էր քաղաքում և կողոպտում էր ամենը, ինչ որ հրէաներին էր պատկանում: Այդ աւերումները շարունակվում էին մինչև առաւօտեան 3 ժամը: Ինչ որ չէին կարողանում տանել, նրանք ոչնչացնում էին: Մի հրէայ վաճառական սպանված է: Մի քանի տեղերում հրդեհներ ընկան: Շատերը կալանաւորված են:

—«Pall-Mall Gazette» հաղորդում է, որ սեպտեմբերի 2-ին երեկոյեան կալանաւորվեցան 7 իրլանդացիներ, որոնք կասկածված են Գլազգոյի մօտ Ֆրադեստօնի գազօմետրը ճայթեցնելուն մասնակցելու մէջ: Գլազգոյից «Central News» լրագրին հեռագրում են, որ բոլոր կալանաւորվածները պատկանում են այդ քաղաքի իրլանդական ընկերութեանը: Նրանց կալանաւորելը այնտեղ մեծ տպաւորութիւն գործեց և սպասում են նոր կալանաւորումների: Կարծում են, որ կառավարութեանը յայտնի են Շոտլանդիայի արևմուտքի մէջ եղած իրլանդացի զինամիտ պատրաստողների հետքերը և այն յարաբերութիւնները, որ ունեն այդ և Անգլիայի ու Ամերիկայի նոյնանման ընկերութիւնները:

—Կոպենհագենից «Journal des Débats» լրագրին գրում են: Գործին ծանօթ շրջանները թագաւորների գումարմանը դանիական մայրաքաղաքի մէջ քաղաքական նշանակութիւն են տալիս: Գերմանական մամուլի սպառնալիքները լսվեցան Բալտեան թերակղզու վրա և նրա բնակիչները յուզվեցան: Դանիան, որին չօգնեցին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, վերջին պատերազմի ժամանակ կորցրեց իր տարածութեան $^2/_5$ և 3 միլիօն բնակիչներից մէկ միլիօն: Նրա սահմանը Իւտլանդի կողմից բաց է: Նրա նաւատորմը բաղկացած է միայն եօթը զրահակիրներից և 10 չոգենաւերից: Նրա շատ լաւ պահված զօրքերը ընդամենը 50,000 մարդուց են բաղկացած, իսկ նրա մայրաքաղաքը իր հին ամրոցներով անկարող է ընդդիմանալ մինչև անգամ այնպէս, ինչպէս նա հերոսաբար ընդդիմադրեց 1801 և 1807 թուականներին: Ամրոցի երկիրը բաց է հարուածների համար, որոնց կարող են նրան հասցնել Կիլից, Շտրալզունդից և Դանցիգից: Կոպենհագենը զինաւորելու համար ամենաքիչը հարկաւոր է 100,000,000 ռուբլ: Արդէն ութ տարի է, որ դանիական ազգային ժողովը հրաժարվում է տալ դրա համար անհրաժեշտ կրեդիտը: Բայց անկարելի է, որ այլ ևս յետաձգվի այդ անհրաժեշտ վճիռը: Սեպտեմբերի 10-ին կերչերի ափերի մօտ մի զօրախաղ կը լինի, և այդ ժամանակ կը փորձվի թշնամու ափ իջնելը և յարձակմանը ընդդիմադրելը: Այդ զօրախաղին կը մասնակցեն նաւատորմը և 12,000 զինուորներ:

—«Independance roumaine» լրագիրը հաղորդում է, որ նա ստացել է արժանահաւատ աղբիւրից հետևեալ լուրը: Օրերումս աւստրիական և ռումինական կառավարութիւնների մէջ կայացած համաձայնութեան հիման վրա Դանուբեան հարցը վերջնականապէս վճռված է Աւստրիայի ցանկութեան համեմատ: Ասում են, որ Բրատիանս ընդդիմանում էր իր ժողովրդականութիւնը փրկելու համար:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բեմական հագուստների չքեղութեան մասին: Ալէքսանդր Դիւման, թատրոնական կրիտիկոս Սարսէին գրած նամակներից մէկում, վճռողաբար յարձակվում է բեմի վրա տարածված հագուստների չքեղութեան վրա և պահանջում է, որ վերջ տրվի այդ սովորութեանը: Ալէքսանդր Դիւմա իրաւացի նկատում է, որ չքեղ հագուստների այդ մօդան զրկում է դերասանուհիներին, որոնք առանց դրան էլ մեծ ռոճիկ են ստանում, գործածել իրանց ազատ ամիսները ոչ թէ հանգստանալու կամ խաղաղ կեանք անցկացնելու համար, այլ մեծ ռոճիկներով այդ ժամանակ խաղալ դաւառական բեմերի վրա կամ արտասահմանի թատրոններում: Դէլապորտի, Դէկլէի և Մօնտինիի նման դերասանուհիները ստիպված էին, ահագին ռոճիկ ստանալով, գնալ ազատ ամիսները արտասահման, որ կարողանան օրինաւոր կերպով ապրել: Ինքն իրան հասկանալի է, որ այդպիսի կեանք անցկացնելով, դերասանուհիները վնասում են իրանց առողջութեանը և շատ անգամ կարճեցնում են իրանց կեանքը: Իսկ ինչ գրութեան մէջ են գտնվում քիչ ռոճիկ ստացող դերասանուհիները: Նրանք ստիպված են — ասում է Դիւմա,—հրաժարվել, երբեմն իրանց դերասանական պաշտօնի ամբողջ ընթացքում, լաւ դերերից, կամ թէ ծախվել հարկաւոր չքեղութիւնը ձեռք բերելու համար: Հագուստների չքեղութիւնը, այդպիսով, խլում է հասարակութիւնից շատ տաղանդներ: Վերջապէս, հարուստ հագուստների մօդան թատրոն այցելող կանանց պճնասիրական ծարան է զարթեցնում, և շատ կանայք ներկայացումից յետոյ գնում են իրանց համար պատուիրել տալու այնպիսի հագուստ, որի մէջ այնպէս դրաւիչ էր նրանց տեսած դերասանուհին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 31 օգոստոսի: Թագաւոր Կայսրը, թագուհին և դանիական թագաւորական տան անդամները այցելեցին այսօր թագաւորական ամարային Բերնսդօրֆ պալատը, ուր թագուհին անցրել է իր մանկութիւնը: Ցետոյ Նախաճաշիկ կար Շարլօտենլունդի մէջ, որ թագաժառանգի բնակութեան տեղն է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 սեպտեմբերի: Նշանակված են. Ցուրկեստանի եպիսկոպոս Ալէքսանդր՝ կօտրօմայի եպիսկոպոս, Խերսոնի թեմի երկրորդ տեղապահ Նեոֆիտ՝ Ցուրկեստանի եպիսկոպոս, Աստրախանի նահանգապետ Եանովսկին Պալտավայի նահանգապետ: „Новое Время“ լրագիրը հաղորդում է իբրև լուր, որ Պերֆիլիեվի գործի քննութիւնը վերջանում է, իսկ դատաստանական քննութիւնը երևի աշունքին կը սկսվի:

ՐԻԳԱ, 31 օգոստոսի: Բալտեան երկիրը քննող սենատոր Մանասէյին երէկ Ս. Պետերբուրգ ուղևորվեցաւ:

ԶԱԳՐԵԲ, 31 օգոստոսի: Ուժեղ զօրաբաժիններ ուղարկված են Գլինի և Պետրինիի շրջակաները, որտեղ անկարգութիւններ կային:

ՍԻՄԼԱ, 1 սեպտեմբերի: Հնդկական կառավարութիւնը ընծայեց աֆգանական էմիրին բազմաթիւ հրացաններ և փամփուշտներ:

ՎԻԵՆՆԱ, 1 սեպտեմբերի: Աւստրիական կայսրը օգոստոսի 30-ին ի պատիւ սպանական թագաւորի տուած ճաշի ժամանակ առաջարկեց Ռուսաց Կայսրի կենացը, որի անուանակոչութեան օրն էր:

ՊԵՇՏ, 1 սեպտեմբերի: Զաբուլկովիցի մէջ Բանատի սահմանի մօտ նշանաւոր կռիւ տեղի ունեցաւ ապստամբների և զօրքերի մէջ, որի ժամանակ 15 մարդ սպանվեցաւ և շատերը վիրաւորվեցան:

ԼՕՆԴՕՆ, 1 սեպտեմբերի: Բանկը պակասեցրեց դիսկօնտը 4 0/0-ից 3 1/2 0/0-ի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի: Ներքին 5% երկրորդ փոխառութեան տոմսակների խաղարկութեան ժամանակ տարան հետեւեալ տոմսակները.

№№ Սէրիի	№№ տոմսակի	տարած գումար.
14,114	50	200,000
13,979	50	75,000
5,245	20	40,000
16,696	48	25,000
7,233	46	
197	33	10,000
454	30	
13,122	13	
18,864	25	
7,993	50	8,000
17,792	4	
7,386	20	
13,235	21	
11,660	27	
11,986	41	
14,968	45	
16,267	45	5,000
15,361	39	
12,147	10	
17,184	43	
3,344	24	
15,301	8	
12,978	45	
8,458	19	
3,549	11	
7,644	8	
6,018	32	
7,310	7	
13,522	12	1,000
16,034	44	
5,432	6	
9,990	2	
454	21	
5,363	29	
829	21	
14,342	35	
14,336	34	
14,275	15	
11,552	3	
7,017	43	

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի: Ներքին 5% երկրորդ փոխառութեան տոմսակների խաղարկութեան ժամանակ հանդան հետեւեալ սերիաները:

232, 409, 419, 693, 1,021, 1,064, 1,172, 1,222, 1,296, 3,065, 3,120, 3,193, 3,585, 3,613, 3,651, 3,907, 3,958, 3,983, 4,016, 4,202, 4,224, 4,664, 6,094, 6,146, 6,524, 6,808, 7,075, 7,581, 7,624, 8,293, 8,300, 8,396, 8,801, 8,827, 9,570, 9,642, 9,689, 9,863, 9,921, 10,183, 10,402, 10,545, 10,902, 11,275, 11,469, 11,519, 12,769, 13,014, 13,054, 13,164, 14,691, 14,761, 15,261, 15,507, 15,748, 16,001, 16,152, 16,460, 16,534, 17,354, 17,884, 18,565, 19,006, 19,013, 19,025, 19,051, 19,178, 19,392, 19,512 և 19,722.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

աշխատանք և կապիտալ, քան որչափ պահանջում են արտաքին բնութեան պայմանները. այդ երկու ֆակտօրների գործածութիւնը ունի այստեղ մի որոշ սահման, որը անցնելով, նա այլ ևս դադարում է լինել արդասաւոր: Զեռակերտող արուեստների մէջ մարդս դէպի իր բնակութեան տեղն է քարշում կապիտալներ և աշխատանքի նիւթեր, գիւղատնտեսութեան մէջ նա ինքն է տեղափոխվում և ամուր կապով կապվում հողի հետ: Այդ է պատճառը, որ այնպիսի տեղերում, ուր տարածված է հողագործութիւնը, չենք պատահում այնպիսի խիտ բնակութիւնների, խոշոր և բազմամարդ կենտրոնների, որոնք յատուկ են ձեռակերտող արուեստները տարածված նահանգներին. քաղաքները երևան են գալիս ինչպէս հետևանք այդ արուեստների, որոնք զօրեղ կերպով նպաստում են մարդկանց մէկ տեղ ժողովելուն: Որովհետև երկրագործը չէ կարող շատ հեռու բնակվել իր դաշտերից, այդ պատճառով երկրագործական նահանգների մէջ մենք տեսնում ենք կամ դաշտերի մէջ միմեանցից հեռու սփռված տների սիստեմա (система отдѣльныхъ дворовъ), ինչպէս, օրինակ, Բելգիայում և Սաքսոնիայում, կամ շատ փոքր գիւղեր, որտեղ լինում են ոչ աւելի քան 10—15 տուն, ինչպէս Ռուսաստանի շատ նահանգներում: Հողագործական նահանգներում, մասնաւորապէս, բնակարանների խտութեան աստիճանը կախված է հողի յատկութիւններից, նորա պաղաբերութիւնից և, գլխաւորապէս տնտեսութեան սիստեմայից. որքան կատարելագործված է հողագործութիւնը, այնքան փոքր են լինում գիւղերը: Շատ հասկանալի է գիւղացու ձգտումը որքան կարելի է մօտիկ բնակվել իր դաշտերից, որպէս զի գիւղից մինչև դաշտը գնալը շատ ժամանակ չը խլէ նրանից: Երբ հողագործութիւնը դեռ ևս զարգացած չէ, երբ նա նահապետական դրութեան մէջ է, այն ժամանակ գիւղացիները բնակվում են մեծ և բազմամարդ գիւղերով, հեռու իրանց դաշտերից, որովհետև հողագործը այդ դիպուածում շատ սակաւ է այցելում իր դաշտերը միայն ցանելու և և հնձելու ժամանակ: Երկրագործական սիստեմայի կատարելագործվելուն հետ միասին գիւղացին սկսում է աւելի ստէպ յաճախել իր դաշտերը, վասնորոյ նորա համար աւելի դիւրին է դառնում ժամանակի կորուստը և աւելի ձանձրալի նորա բնակարանի հեռաւորութիւնը:

Երկրագործութեան վերոյիշեալ առանձնայատկութիւններից հետևում է, որ այդ արուեստի յաջողութիւնը և արգասաւորութիւնը աւելի կախում ունի արտաքին բնական պայմաններից, քան թէ որ և է ուրիշ արուեստ, ուր աւելի մեծ դեր են խաղում ներքին հոգեկան պայմանները՝ ձեռնարկողի կամքը, եռանդը և այլն: Օրինակ, մետալագործութեան մէջ ձեռնարկողը կարող է շատ ճիշդ կերպով հաշուել, թէ որքան արդիւնք կը ստանայ նա իր զործ դրած աշխատանքից և կապիտալից, կամ որպիսի քանակութեամբ պէտք է գործ դնել այդ երկու ֆակտօրները մի յայտնի արդիւնք ստանալու համար: Այն ինչ հողագործութեան մէջ այդպիսի հաշիւներ շատ անգամ անհնարին են. երկրագործական աշխատանքի արդիւնքը կարող է մի ակնթարթում ոչնչանալ բնութեան հաճոյքից, երկրի վատ յատկութիւնից, կլիմայի պատահական փոփոխութիւնները կարող են կործանել գիւղատնտեսի բոլոր դիտաւորութիւնները, բոլոր ցանկութիւնները: Այնու ամենայնիւ պէտք է խոստովանած, որ երկրագործութիւնը ևս, ինչպէս և միւս արուեստները, որքան նա առաջ է գնում, որքան կատարելագործվում է նորա սիստեման, որքան նա աւելի է մօտենում մի արհեստի, որը հիմնված է բնագիտական ճշմարտութեանց վրա, նոյնքան աւելի և աւելի սկսում է ազատվել արտաքին բնական պայմաններից. երկիրը պարարտացնելու, վարելու և ցանելու աւելի կատարելագործված եղանակները նուազացնում են բնական պայմանների ազդեցութիւնը հողի պտղաբերութեան վրա: Շնորհիւ կատարելագործված մշակութեան, երկիրը աւելի անմատչելի է դառնում երաշտութեան, շնորհիւ հողագործութեան լաւագոյն սիստեմային, աւելի հնարաւոր է լինում ցանել զանազան տեսակ հացաբոյսեր: Այդպիսի բազմատեսակ բոյսեր արտադրող երկիրներում սովը շատ հազագիւտ երևոյթ է: Այնուամենայնիւ հողագործութիւնը դուցէ երբէք չէ կարող հասնել այն անկախութեան, որը յատուկ է ձեռակերտող արուեստներին:

Միւս կողմից, նոյն իսկ բարձրագոյն գիւղատնտեսութեան մէջ աւելի դանդաղ կերպով են ընթանում, քան թէ ուրիշ արուեստների մէջ: Սովորութիւնը ունի այստեղ իր առանձին զօրութիւնը և նշանակութիւնը: Հողագործը գիտէ, որ հնձած հացն անգամ կարող է ոչնչանալ. բնութիւնից այդ մշտական կախումը թուլացնում է նորա հաւատը դէպի մարդկային հանճարի և կամքի զօրութիւնը: Հողագործը չունի ոչ մշտապէս առաջ ընթանող խելքի հետաքննութիւն (пытливость), ոչ զօրեղ կամք, որ կարողանար արտաքին բնութիւնից երևան եկած արգելքների առաջն առնել. այդ յատկութիւնների փոխանակ նորա մէջ սաստիկ զարգացած է այն զգացումը, որին անուանում են կոնսերվատիզմ, այսինքն պահպանողական ոգին: Մշտապէս պինդ կապված լինելով իր պարապմանց տեղի հետ, հողագործը շատ քիչ յարաբերութիւններ ունի մարդկանց հետ, վասնորոյ նորա մտքերը և զաղափարները շատ դանդաղ կերպով են փոփոխվում:

Ահա այն բոլոր առանձնայատկութիւնները, որոնք որոշում են գիւղատնտեսութիւնը և, մասնաւորապէս, հողագործութիւնը ուրիշ արուեստների շարքում:

Բ. Դաշալիթեցի

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՒԼԱԲԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆԵՑԻՈՑ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

և

ՆՈՐԵԿՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ

ՍԿՍՎԵՑԱՆ

ՕԳՈՍՏՈՍԻ 29-ԻՑ

Ցեսուչ ուսումնարանի՝
կար. Թէմուրազեանց

Ուսումնարանը գտնվում է Լազարեվսկի փողոցի վրա, Մելիք-Շահնազարեանցի տունը։

5—7



ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Սիստեմատիկական ընթացք

Կազմեցին Գ—Բ և Մ. Գ.

Մասն ԱՌԱՋԻՆ—ամբողջ թուեր. 35 կոպ.
Մասն ԵՐԿՐՈՐԴ—կոտորակներ . . 45 —

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

Գումարով գնողներին 20% զիջումն։

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

2—3

Հաւլաբարի „ՀՈՒՓՍԻՄԵԱՆ“ օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը յայտնում է յարգելի հասարակութեանը, որ աշակերտուհիների ընդունելութիւնը կը սկսուի սեպտեմբերի 1-ից, իսկ կանոնաւոր ուսումը 10-ից։ Ընդունելութիւնը կը լինի ամեն օր, առաւօտեան 9 ժամից, մինչև 12։ Ուսումնարանը ունի երեք պատրաստական և բացվում է առաջին դասատուն։

Հոգաբարձու Ա. Մելիք-Այվազեանց

1—6

500 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ

ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ գնելուց առաջ խելացի և ձեռնտու է տեսնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մահճակալների ընտրութիւնը և քանակութիւնը։ Արծրունու գալերէյ №№ 156, 157, 158, 159 և 160։ **ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵԼ** այս համարների վրա։

1—10

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իր ուսման ընթացքը ռուսաց օրիորդական գիմնազիայում և պարապել է հայոց ուսումնարաններում ՉՈՐՍ ՏԱՐԻ ուսուցչուհութեամբ թէ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶՈՒՄ և թէ ԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒՄ,—ցանկանում է գաւառական քաղաքներից մինում ուսուցչուհութեամբ պարապել։ Պայմանների մասին դիմել պ. Զ. Գրիգորեանցի գրախանութը։

10—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻԱ, ՍԻՄԷՕՆՈՎՍԿԻ ՓՈՂՈՑ, Տ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆԻ)։

Հիւանդները ընդունվում են ամեն օր։

Առաւօտեան՝ 9—10½ ժ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ - վիրաբուժութեան և վեներական հ. և ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—կանանց, երեխայոց և ներքին հ. 10½—12 ժ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ—ներքին հ. 12—1 ժ. աչքացաւի ԼԱՐԻՈՆՈՎ—ամեն օր, բացի չորեքշաբթի և և կիրակի. ԲԵՅԽ—չորեքշաբթի և կիրակի։

Երեկոյեան՝ 5—7 ժ. ՈՒՇԱԿՈՎ—երեխայոց և կոկորդի հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Զղային և հոգեկան հ. և էլեկտրա-բուժութեան ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ—ամեն օր և, իբր խորհրդակից նոյն հիւանդութեանց համար, Ա. ԲԱԲԵԱՆ—երեքշաբթի և շաբաթ։ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (կոնսուլտացիա)—երեքշաբթի և շաբաթ 7—8 ժամը երեկոյեան։ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։ Վարձ՝ խորհուրդ երեթևեկներին—50 կոպ. կոնսուլտացիան— 3 ռուբ. չքաւորները—տնվարձ։

Հիւանդանոցի կառավարիչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՑ (բնակվում է նոյն հիւանդանոցում։)

Հիւանդանոցից բոլորովին անկախ պատճառներով, բժիշկ Տելեֆոնը չէ կարողանում բանալ ջրաբուժական բաժին։

(չորս. ուրբ.)

ԲԺԻՇԿ ԿԻՆ

Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԻՆԱ

ընդունում է հիւանդներին առաւօտները մինչև 10 ժամը, երեկոյեան 5—7 ժ. Միխայլովսկայա փողոց տուն № 91։ (Քաղաքային հիւանդանոցի հանդէպ)։

5—8 (2)

ԵՐԿԱԹԷ

ԱՆԳԼԻԱԿԱՆ



ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ

Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահճակներ ծովային խոտով լցված 6—9 ռ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։ Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներ և երկաթէ ԳՐԻԶՆԵՐ, կողպէքներ, թերիվ, ոզամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, ըէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբօմներ, կոնֆեկտներ, թէյ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։

84—100



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ. .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվո.	6—23	6—33	Միխայլօվո.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ. .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվո.	1—50	2— 5	Գօրի. . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . .	4— 6	4—30	Միխայլօվո.	8—41	8—56
Թիֆլիս. .	8—առաւ.	—	Սուրամ. .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . .	10—24 երեկ.	—

ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱՏԵՍՉԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ ԹԻՖԼԻԶՈՒՄ

Սօլօլակի և Բաիշչեվսկի փողոցների անկիւնում, Աղէքսանդր Ղորղանեանցի տանը, № 21

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ այն երկու սեռի անձանց, որոնք որ կամենում են իրանց վաճառական գործունէութեանը նուիրել։

Կուրսերը կունենան երկու բաժին՝ մեծագոյն միամեայ դասընթացքով և փոքրագոյն երկամեայ դասընթացքով։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն, 4) Առևտրական թղթակցութիւն և 5) Առևտրական կանոնագրութիւն։

Տարեկան վարձը մեծագոյն բաժանման համար 125 ռուբլի է. իսկ փոքրագոյնի համար 75 ռ.։

Կուրսերի մանրամասն կանոնները և ծրագիրը թէ ռուսերէն և թէ հայերէն լեզուով կարելի է ստանալ ձրիապէս հիմնադրի բնակարանումը, եղբարց Ծովիանովների առևտրական տան գրասենեակում և „Մշակ“ լրագրի խմբագրութեան մէջ։

Ծանոթացաղացիք նոյն կանոնները և ծրագիրը ստանալու համար պէտք է դիմեն բացառապէս հիմնադրին վերոյիշեալ հասցէով։

Ընդունելութիւնը ցանկացողների համար լինում է ամենայն օր 6 ժամից մինչև 8 կէսօրից յետ։ Նոյն ժամանակամիջոցում կարելի է հիմնադրից բացատրութիւն ստանալ կուրսերին վերաբերեալ բոլոր հարցերի մասին։

Հիմնադիր „Առևտրական կուրսերի“ Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ

Աշակերտների ընդունելութիւնը կը շարունակուի միայն մինչև 15-ն սեպտեմբերի։

13—15 (2)

Դուրս եկաւ մամուլի տակից ԴՐ. ԱՒԵՏԻՔ ԱՐԱՄԽԱՆՆԱՆՑԻ քաղաքատնտեսական դասախօսութիւնների առաջին տետրը

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ և ԱԶԳԱԲՆԱԿՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գինն է 40 կոպէկ։

Ցանկացողները թող բարեհաճեն ստորագրուել **ԲՈԼՈՐ ԵՕԹԸ** դասախօսութիւններին, վճարելով միայն 1 ռ. 50 կ.։

Դիմել **ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ** և **ԿՈՎԿԱՍԵԱՆ** գրավաճառանոցները և **„ՄՇԱԿԻ“** խմբագրութեանը։

4—10 (1)

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ռ. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ռ. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏ Ի ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

40—100

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Сентября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.